

2082

Zechstein σ.
sharp

84
L-49

Aug 1905

84-3

36

L-49

Հայոց Արքայության Արքայության Տպարան

Ն 1.

ՄԱՐԴ

Թարգ.

Պ. Պ.

2003

Բ. Ա. Գ. Ա. Տ.
Տպարան Ն. Երևանցեանի
1905

2011

1876m

84-3
L-49

№ 1. ՀՐԵՍԱՐԵԿՈՒԹԻՒՆ „ԵՐԵՎԱՆՑ“-Ի № 1.

Կրօքանչ Խեց.

առջայի հետ?

84-3
L-51

Մ Ա Ր Գ.

1002
5238

Թաւրզ.

Պ. Վ.

ԲԱ.Գ.Ռ.

Տպարան Ն. Երեվանցեանի
1905

2020-07-09 17:00:00.000000000 +0000

卷之三

Дозволено цензурою 13 Апреля 1905 г. Тифлисъ

This horizontal decorative strip features a repeating pattern of stylized floral motifs. Each unit consists of a central circular element containing three stylized flowers, flanked by symmetrical scrollwork and leafy branches. The design is rendered in dark blue or black ink on a light background.

Աղօթականության բարձր դեմքը . . . ով—
այս պատճեն պատճեն զայտ համար պահան
և յան ան թիւ առաջանալու շուրջ ուժագ
պահան— Առաջանալու յախց պահան
զայտի զայտուրք . . . պահան և պահան

(Մօրիս Լըմիրսիէ): Հայութ մայութ
-այսի բառու առ բաղայ եւ յան շնչու-
-զգի առաջար պահե և մատաց խնչած քիչուն
-ունաս ծանի խու

Պատարագից յետոյ չ. Էղդրանը մտաւ աւանդատուն։ Նոյեմբերի մոտայլ երկնքից աղօտ լրյալ թափանցում էր միակ երկաթապատ վագրիկ լուսամուտով։

Լոյսի մթնշավի մէջ խեղջուկ հագնուած,
զլսին լաշակ ձկած և ծնոտի տակ ծայրեցը կա-
պած մի կնոջ կերպարտնք երևեցաւ. Սրտառութով
ողողած աշքերով և հեկեկալով, նա քահանայի
առաջ ծունդի եկաւ.

Հրացանի են բռնում նորան
—մում . . . թվ:

— Պրուսայիները . . . մարդուս . . . , — զառն
Տեսնանոց խոսե՞լ թշուալ ենած ձախուհի:

Յուղուած և այլայլուած քահանան շտապով

սեղանի վրայ զրեց սկիհը հազորդութեան հետ և
կնոջը վեր բարձրացրեց:

— Ի՞նչպէս, ձեր ամուսնուն:

— Եյ . . . երեկ մեր ազադ հրացանաձիգների
կողմից սպանուած երեք սլրուսացի ուլաների փո-
խարէն: Այսօր պրուսացիները վիճակ են ձգել և
վիճակն ընկել է երեքին քահանայ — Վենսանի,
Լարդերի և ամուսնուս . . . աղատեցէք, ֆրկեցէք,
պարոն Կիւրէ:

— Ոշինչ անել չեմ կարսդ ես, — ասաց թախ-
ծալից ձայնով քահանան և ձեռքը լուսահատ կեր-
պով թափ տուեց:

Արցունքը ողողում էր նրա այտերը: Գլուխը
կախ կցեց և մոլորանքի մէջ ընկաւ: Քահանայի
սիրտը կտոր-կտոր էր լինում՝ տեսնելով այն դառն
աղէտը, որ իւր ծխականների գլխով պիտի անցնէր:

Նա՝ անզօր էր իւր հօտին օգնելու, նա՝ որ
այդ հօտի համար երբէք չէր խնայել իւր անձը,
նոյն իսկ կեանքն զոհաբերութեան շափով: Բայց ինչ-
պէ՞ս և ինչով հանգստացնէր այդ դժբախտ արտաս-
ռուող կնոջը, որը եկել՝ իւր փեշն էր բռնել:

„Պէտք է սորա ամուսնուն ֆրկել, ինչպէս էլ
որ լինի“, մտածեց նա:

— Երիացէք, յոյներդ Աստուծոյ վրա դրէք:

Ճտապով հանեց եկեղեցական զգեստները և
քայլերն ուղղեց դեպի պիտի տունը, որտեղ տեղա-
ւորուել էր այժմ ուլանների գումարտակի համա-

նատարը, որոնք իրեկ առաջապահ այլտեղ էին ու-
ղարկուած: Քահանայի սպրտնած զէմքն աւելի ու
աւելի էր գունատուում, քանի մօտենում էր այդ տանը:

Ահեղ տեսակցութեան միտքը նորան սարսուռ
էր ազգում, բայց քահանայի հոգեկան դրութիւնը
շուտով հաղթանակեց իրեն ընկնող սարսափր: Նո-
րան տարան պիտական վարչական խորհրդի դահ-
լիճը: Հրամանատարը նստած էր սեղանի մօտ և
թղթեր էր ստորագրում: Նայեց քահանային և, որ-
պէս զի որի է խնդիր անելու հարց չձագի, կոպ-
տութեամբ հարցրեց ֆրանսերէն:

— Ի՞նչ էք կամենում.

— Եկել եմ խնդրելու այս գիւղի ընակիշներին
ներելու համար . . . նոքա բոլորովին անմեղ են,
ասաց քահանան:

— Պատերազմը իւր իրաւոնքներն է արտա-
յայտում, — հակածառեց հրամանատարը: — Ձէր ա-
զատ հրացանակիրները համարեա ամեն օր սպա-
նում են մերոնց: Բաւական է. Ժամանակն է այդ
բաներին վերջ տալու: Ճատ ցաւալի է, որ ձեր
գիւղը ապաստանարան է եղել Աստուծոյ համար:

Ինչպիսի պատճառաբանութիւններ էլ որ չէր
բերում քահանան, բայց բոլորն էլ ջախջախւում
էին գերմանացու քարասիրոտ տրամաբանութեան
առաջ: Վերջապէս, յաղթահարուած իւր անելանելի
դրութիւնից, նա վերջին ճիգն արեց, որպէս զի
գոնէ մէկին աղատէ դատավարտուածներից:

— Գիշացէր գնիէ, Լըբուային, երեք զաւակունի կինն էլ անտանելի դրութեան մէջ է:
Հրամանատարը պլուխը շարժեց և, թուզիթը ցոյց տալով, ասաց:

— Հրամանն արդին ստորագրուած է, չեմ կարող խախտել և պարտաւորութեանս դաւաճանել: Դուք, իբրև քահանայ, հասկանում էք այդ: Մեր ուղաններից երեքն ապանուած են, ձերոնք նոցա փոխարէնը պարտաւոր են հատուցանել:

Քահանային մնում էք միայն գուրս գնալ, բայց նա տեղից չէր շարժում: Խռովթինը շարունակում էք: Մի քանի թղթեր էլ նայելով, հրամանատարը դլուխը բարձրացրեց և ձեռքով անհամբերութեամբ արտայայտով շարժում արեց . . . քահանան յանկարծ մօտեցաւ նորան և բաշուելով, համարեա ամաշելով, արտասանեց:

— Ես ոչ կին և ոչ էլ զաւակներ ունեմ, ինձ վերցրէք նորա փոխարէն:

Զինուորականը կարեկցութեամբ նայեց քահային, որ արտայուղ պատասխանի էք սպասում:

Մի առժամանակ լռելուց յետոյ հրամանատարը վերջապէս խօսեց:

— Են ինչի մասին խնդրում էք, շատ ծանր ինդիք է: Պուք գեռ ևս երիտասարդ էք . . . , լաւ մտածեցէք:

— Խնդրում եմ ձեզ:

Պատասխանի փոխարէն հրամանատարն սկսեց

այս զննուածութեամբ այս ուղարկուած արագ-արագ պիմիայն գրել: Ըպա տեղիցն ելաւ և թուզիթը քահանային մեկնեց:

— Ահա Լըբուային ազատելու հրամանը, իսկ նորա տեղ . . . և նա խօսրը կիսատ թողեց:

Խոտլ և տիտը ձայնով աւելացրեց.

— Կարող էք արդիօք, ալ. Կիւրէ, ամենամեծ յարգանքի արժանանալ ձեր կողմից, թոյլ տուէք սեղմել ձեր ձեռքը:

Քահանան մեկնեց նորան իւր ագնիւ, անտրատ ձեռքը և սխմեց հրամանատարինը:

Բալորովին երջանիկ իւր անձնապահովութեամբ, կարծես թեք առած, չ. Լըգրանը թռչում էք դէպի ուսումնարանի շէնքը, որտեղ բանտարկուած էին դատապարտուածները:

Օռտով հասաւ դպրոցական շէնքին, որի գուան առաջ թուրը շնկչիւացնելով անց ու դարձ էք անում ուլանների սպան:

Քահանայի գլուխ տալը պատասխանի շարժանացնելսվ իսկ, սպան մեծ դժկամակութեամբ ընդունեց նորանից բերած թուզիթը: Բայց, աշքի անցնելով, սպայի զածան արտայայտութիւնը շքացաւ. Նա ուզգուեցաւ, ձեռքը գլխարկին տանելով պատիւ տուեց և յարգանքով ասաց.

— Հաճեցէք ներս մանել, Պ. Կիւրէ:

չ. Լըգրանը խնդրեց սպային Լըբուային գուրս կանչել:

Հոգեպէս ընկճուած արտասուաթոր աչքերով,

Լըրուան վազեց դէպի քահանան և բռնեց նորա ձեռքը.

—Կի՞նս . . . իմ խեղճ մանրիկ զաւակներս . . . —յուսահատ ձայնով արտասանեց նա.

—Արիացէք, յոյսներդ Աստուծոյ վրայ գրէք:

Խիստ զգուշութեամբ քահանան յայտնեց նորան իւր ազատութեան մասին, որ ստացել էր իւր ընտանեկան վիճակի չնորհիւ:

Լըրուան համարեա թէ խելքահան եղաւ ուրախութիւնից և հենց այն է, ուզում էր տուն վազել, բայց քահանան հանգստացրեց նորան:

Կողմնակի փողոցներով միասինճանապարհ ընկան և Լըրուայի տնից ըիշ հեռու քահանան կանգնեցրեց նորան.

—Սպասեցէք այստեղ, ես գնամ կնոջդ նախապատրաստեմ:

Խրճիթն ընկած էր պարտեղի խորքում. Լըրուայի կինը շրջապատուած, ձայները փորներն ընկած, յուսակտուր մանրիկներով, արտասուք թափելով, բան էր անում:

Երբ նայեց քահանայի փայլող դէմքին, յոյսը յանկարծ արթնացաւ նորա մէջ.

—Ազատեցին նորան, —բացականչեց նա:

Քահանան լուռ, ժպտաց:

—Տեսնել եմ կամենում նորան:

—Այստեղ է արդէն, ասաց քահանան:

Մարդ և կին գրկախառնուեցան, ուրախութիւնից արտասուելով:

—Ճնորհակալութիւն անգամ չկարողացանք անել ձեզ, ասաց վերջապէս Լըրուան:

—Չեր երջանգութիւնը իմ ամենտմեծ վարձադրութիւնս է, ասաց յուզուած շեշտով քահանան: Ազնիւ հոգիներ էք, յարգեցէք միշտ միմեանց:

Ամուսիների ձեռքը սղմեց, համբուրեց փռքրիկներին և շտապ քայլերով դիմեց դէպի զպրոցական շինքը: Այստեղ Լառտերի և Վէնոսանի հետ տեսնուելուց յետոյ, բացակայելու իրաւունք խնդրելով, չ. Լըրուանը տուն վնաց, որպէս զի վերջին կարգադրութիւնը անէ: Ժամկոչին հրամայեց ժամը երեքին բոլոր զիւղացիներին եկեղեցի հաւաքել: Նախաճաշչից յետոյ, գրպանները հացի ու շաքարի կտորներով լցնելով, չ. Լըրուանը, սովորականի համաձայն, դիմեց տան մօտ գտնուող առանձին փոքրիկ բակը, որտեղ տեղաւորւմ էին նորա իշուկը և միւս ընտանի կենդանիները:

Տերոջը տեսնելով, տանակը թողեց ապառ ուտելն ու մօտեցաւ նորան: Քահանան սի ձեռքով գրկեց կենդանու վիզը, իսկ միւսով սկսեց շոյել նորա տաքուց թաւշապատ գունչը, ասելով, — „իմ սիրունիկ, իմ բարի իշուկո“:

Նորա բնրշանքը վարակել էր բոլոր ընտանի կենդանիներին, իւր միայնութեան ընկերակիցներին և բոլորովին ձեռնասուն ու հեղահամբսյը էր դարձրել:

Աւանակը տերոջ գրպանում ինչ որ քաղցր քանի հոտ առնելով, սկսեց զռալ:

— Եյ դու, չարտճճի բէլիկ, այս ես ուզում համ,
— ասաց քահանան կապայի, գլուխնից մի կտոր հաց
հանելով:

Նորա ստերի շուրջը հաւերը կղկղոցը դրել
էին և թիերն էին թափահարում, աշխատելով
տերոջ ուշադրութիւնը դարձնել իրանց վրայ: Նա
կռացաւ և ափերի մէջ հացի փշրանքները մնենց
նոցա. որմէր և ապահարար վրայ վաղեցին:

Ճագարներն էլ չէին մոռացուել: Հացի թիե-
փալ կշտացնելով դոցա քահանան քնիրշութեամբ
փայփայում էր նոցա փակլիկ, կլոր մէջըերը:

Իշուն անդադար հետևում էր նորան. քահա-
նանմի կտոր շարար գեմ արեց նորան, որ սկսեց
ծամել և բաւականութեամբ ականջները վեր և վար
անել: Իւր հեղ, բարի աշքերով դիտում էր տերոջի:
Սարուուը պատեց Հ. Լըգրանին, գլուխը լսնար-
հեց ձեռները մեջըին դնելով վնաց իւր այդին:

Այնակաղ, մարգերի և ծաղիկների թմբերի մէջ
փայլում էին մաքուր, աւազով ծածկած կածանները:
Բարձր ծղոտով փաթաթուած տանձենին իւր ուզիդ,
մերկացած ճիւղերն էր տարածում զուգահեռաբար
քարեապատ՝ պարսպին:

Քահանան կախ ընկած ճիւղը կապեց ուռենու
ճիւղոտով և մտագրադ շարունակում էր շրջապատի
արևկողմ մասով առաջ գնալ: Համենելով փորրիկ
զոնակին, որ դաշտն էր տանում, կանգ առաւ և
քաց արեց:

Նորա աշքերի առաջ տաբածում փուռում էր
խաղակ, արևի շողերի մէջ շագախաւած զով կրակի:
Եջ կողմը այս ու այն տեղ զրուած էին բազմաթիւ
խոտի զեղեր, սրճնք հեռուից յարդարածկ կտու-
ներով խրճիթներից կազմուած կլւզի էին նմանուա.
Չափ կողմը համարկենու ծմակը խանուում էր
եղենիների անտառի հետ և ծածկում հորիզոնը:

Երկար նայում էր քահանան այդ պարզ շինա-
կան տեսարանին, կարծես կշանալ չկարողանակալ
գիտելուց, ապա տանակը ծածկեց:

Աշքերը բարձրացրեց և պարսպի վրայից նա-
յեց եկեղեցու ժամացոյցին: Փոքրիկ ոլակը I և II
մէջ շարժում, իսկ մեծը ժամանիչի կիսին էր հա-
սել արգեն:

, Երեք ժամից յետոյ պիտի մեռնեմ“ մտածեց
յանկարծ Հ. Լըգրանը:

Բնագդարար ձեռքը կրծքին տարաւ, կարծես
պաշտպանել էր ուզում զնդակից, նոյն խոկ տարօ-
րինակ թուաց, որ արեան հետը չկար ձեռքերի
վրայ:

Երեք ժամից յետոյ ինքը գիտակնացած կլինի,
որին կամփոփեն և կպահեն գագաղի մէջ առ յա-
փտեան:

Կարծես, բանդակուղանքի մէջ, արդէն լսում
էր դագաղի խուփի վրայ թափուող հողի առաջին
խուլ զարկերը:

Կարելի բան էր: Մեռնել քառասունի մօտ,
կեանքի, առողջութեան կատարեալ կենսունակու-

թեամբ: Որբան մանր ուրախութիւններ կային նորա երջանիկ ապրուստի մէջ, որ չէր վրդովուս ոչ խռովայոյգ ցանկութիւններով և ոչ փառասիրական ձգտումներով, —քահանայական, եկեղեցական պաշտպան պարտաւոր էր, թշուառներին մխիթարութեամբ, եղբայրական սեղան, ընդանի կենդանիների հոգս ու խնամք, պարտեղի հոգատարութիւն . . .

Օ՛, ինչո՞ւ ընդունեց այդ անմեղ անձնագոռութիւնը: Բոլորովին կորցնելով ինքն իրեն իր վրայ ծանրացող թախիծից, քահանան շտապօվ մօտեցաւ դռնակին և բաց արեց:

Նորա հայեացը յամառութեամբ հետեւում էր հենց պարսպապատի մօտից ոկտոզ և արտերի միջով ոլոր մոլոր անցնող և մեծ ճանապարհն ելնող կածանին:

Նորա միտքը աւելի ևս հեռու սլացաւ մեծ ճանապարհի ուղղութեամբ, անցաւ անտառի մջիով, իսկ այստեղ՝ մի քանի կիլոմետր տարածութեան վրայ —երկաթուղու կայարանն էր . . .

Քահանան հետ նայեց. դաշտը բոլորովին ամայի էր մինչև նորիզոն իսկ. մարդու հոտ անգամ չկար: Ոչ ոք չի տեսնի նորա փախուստը. նա կայարան կհամնի, երկաթուղի կընսուի և կուանայ հեռու, հեռու . . . աղատ կլնի և կապրէ . . . կապրէ . . .

Խելագարի նման, կարծես ցնորքների աշխարհում լինէր, առաջ սլացաւ, բայց յանկարծ ուշիքի

եկաւ . . . իսկ Լըգրուան . . . հապա իւր խօսքը . . . չ. Լըգրանը ամուր խփեց դանակը. հեծկլտալով ծունդ եկաւ և իւր հոգու ու մտքի բոլոր ոյժով օգնութեան կանչեց Փրկչին, որը նոյնպէս Գեթսեմանի պարտեզում փորձել ու կրել էր մօտալուտ մահուան բոլոր սարսավին ու արհաւիրքը:

Քահանան ազօթում ու խնդրում էր Տէրոջը, որ մինչև վերջին րոպէս իւր հետ լինի և հոգու արութիւն պարզէ է:

Ամրապնդսաւծ ազօթքով, նա զգաց, որ միայնութիւնն ու զառանցանքը վատ մտքեր ևն ներշնչում իրեն, ուստի և տուն շտապեց: Իւր հաշիւները կարգի բերեց, նորից համրեց և կարգաւորեց յցէթպթերը, տօկոսաբեր և հասթեր թղթերը կտակ արեց յօգուտ իւր ծիփ չքաւոր անդամների: Մահր-մօւնը իրեղենները խնդրեց բաժանել ի լիշտատակ:

Իւր աւանակը կտակեց հարսւստ մարդու, խնդրելով շծախել երբէր, որպեսզի իւր սիրելի իշուկը կեանքի վերջին օրերին թշուառ ծերութեան ճանապարհի միջին չվերջացնէ՝ ընկճուած բեռան ծանրութեան տակ: Երկար ու ջերմաջերմ աղօթում է, իւր մեղքերի տակ թուզութեան համար, յուսալով Աստուծոյ գլժասրտութեան վրայ:

չ. Լըգրանը հազար իւր նոր վերարկուն, նոր կօշիկները և վերցրեց ձեռնոցները: Երբ ժամը երեքը

զարկեց՝ սանդուղքներից յած եկաւ։ Դուռը բանա-
լով, տեսաւ խիտ-խիտ ամպերով պատած մռայլ
երկինքը՝ սովորականի համաձայն, յիտ դառջաւ
անձրեանոցն առնելու։

Եկեղեցին լիքն էր ժողովրդով. ասել ձգելու տեղ շաբ. կարծես ճրապալոյծի երեկոյ լիներ:

Պիշտը նոյն իսկ թերահաւաքներին, բերել,
համախմբել էր այն մարդու շուրջը, որ վերին բա-
րոյական հեղինակութեան ներկայագուզիչն էր:

Փիլոնը ծածկելով, չ. Լրդրանն անցաւ ժողովրդի միջով և բեմ բարձրացաւ:

Խաչակրեց երեսը, մի բողէի շափ կենդրոնացաւ և առաջ.

— Միլելի և զբայրներ, շատ ուրախ եմ, որ
այսպիսի բազմութեամբ ժաղովուած եմ տեսնուամ
ձեզ։ Ազօթենիր ամէն գատապարտուածների համար։
Լրուան ներողութիւնի արժանացաւ, բայց ոչ մի
միջնորտութիւն չօգնեց Հառուերնի և Վէնսանի հա-
մար։ Ես երկուսին էլ տեսալ, և երկուսին էլ հաղոր-
դեցի։ Նորա արգեն պատրաստ են մաշ ընդունելու
ինչպէս կատարեալ քրիստոնեաններ և փրանքիեացիք։

Եռանց ոելթոելթանքի պարզ լճզույի խօսեց
գէպի հայրենիքն ունենալիք պարտաւորութեամբ,
զոհաբերութեան և սիրու մասինի։ Նորա պարզ
խօսքերը յուզեցին այդ պարզամիտ ամբալը, որի
գաղափարները սովորական նիւթական շահերից
գէներ չէր անցնում։ Յանկարծ մի կնոջ յուսահայ

աղաղակ լսուեցաւ, զա Վինսանի մայրն էր, որին
համարեա, մեռած դուրս տարան եկեղեցուց:

Ամբոխի մեջ գժղոնութեամբ խուլ աղմուկ
բարձրցաւ։ Ժողովրդին հանգստացնելու համար,
քահանան ասաց։

—Ազօթենք դատապարտուածների մեղերի
թողովթեան համար:

Բարձրաձայն կարդում էր ազօթքները, իսկ ժողովությունը կրկնում էր:

Ապա ամենքը միաբան, խմբովին երգեցին „De profundis“։ Քահանան օրհնեց ամենքին և յորդորեց տուն զնալ և մինչեւ առաւտ տնից չեղնեն և հնագանդութեամբ տանեն անակնկալ դրժբախտութիւնը . . .

Յետոյ տեսան, որ նա քայլերն ուղղեց դէպի գալրոցական շենքը ձեռնոցները ու հովանոցը բրոնած

Հետևեալ առաւտեան գիւղացիք իմացան, որ
գերմանացիներն իրենց քահանային հրացանի
բռնել . . .



NL1806356

2082

ԳԻՒՆ Ե 5 ԿՈՊ.

2013

Գիւն Բаку, Меркуրьевская улица. Мебельный
магазинъ М. Х. Лазарева. Пер. Аршалуйсъ.

